«ՄՇԱԿ» ԹԵՐԹԸ 1877—1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրեին Գր. Արծրունու «Մշակը» ուշադրությամբ հետևում էր Արևմտյան Հայաստանի ազգային ու տնտեսական ծանր կացությանը և Օսմանյան Թուրքիայի արտաքին քաղաքական իրավիճակին։ Բռնակալության դեմ ոտքի ելած բալկանյան ժողովուրդների պայքարը ոգևորում էր Արծրունուն և նրա համախոհներին, որոնք արևմտահայերի փրկությունը որոնում էին ժողովրդի ընդդիմության մեջ։ 1876-ի վերջերից մինչև 1880-ական թթ. սկզբները «Մշակն» իր նյութի հիմնական մասը նվիրում է արևմտահայ իրականության խնդիրներին, տպագրում տեղերից ստացված թղթակցություններ, մշտապես տեղեկություններ տալիս հայ գավառի և Կ. Պոլսի իրադարձությունների, Թուրքիայի արտաքին քաղաքականության մասին։

Արևմտահայերի հարցի արծարծումը «Մշակի» էջերում, ըստ էության, սկիզբ է առնում 1876-ից։ Կ. Պոլսում գումարված դեսպանաժողովից թերթն ակնկալում էր նաև հայերի վիճակի քննարկումը։ Այդ օրերին իսկ Արծրունին ցույց էր տալիս, որ ամենևին չի հավատում Թուրքիայի տիրապետության պայմաններում արևմտահայերի կյանքի բարվոքման որևէ հեռանկարի։ Նա հանդգնորեն կոչ էր անում ռուսական մամուլին՝ պրոպագանդելու հայ ժողովրդի ազատագրման գործը, և այս իրողությունը վկայում է, որ «Մշակի» խմբագիրը նշված հարցի լուծումը ի սկզբանե կապել է Ռուսաստանի միջամտության հետ։ Ռուսաստանի արտաքին քաղաքական դիրքը Թուրքիայի նկատմամբ, բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարին օժանդակելը, փաստորեն, ընդգծում էին նրա ազատագրական դերը կայսրության մյուս հպատակ ժողովուրդների աչքում։ «Մշակի» պատկերացումները արևմտահայերի ազատագրության վերաբերյալ ձևավորվել են և՛ Ռուսաստանի քաղաքական վերոհիշյալ դիրքի, և՛ թուրքական բռնակալության ներքո հեծող ժողովուրդների տրամադրությունների ակնհայտ ազդեցությամբ։ Ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, որին հետևում էր «Մշակը», գործնական հիմնավորում էր գտնում սլավոնական ժողովուրդների հերոսական ընդվզումների մեջ։ Մշակականներին առանձնապես ոգևորում էր Ռուսաստանի վճռականությունը վերջիններիս պաշտպանության գործում։ Սակայն տերությունների միջև խորացող հակասությունները Արծրունուն հույսեր չէին ներշնչում դեսպանաժողովի բարեհաջող ավարտի մասին։ Տարոն այս շրջանի տրամադրությունները ի հայտ է բերել նրա թղթակիցներից մեկը. «Մի հայ խնդիր երևան ելավ,— գրում է նա,— որ մի օր օրինավոր լուծում պիտի ունենա անշուշտ, թե ոչ Կոստանդնուպոլիսի դեսպանաժողովին մեջ, գեթ պատերազմի դաշտին վրա, զի հայս հասուցված է այժմ, թե չպիտի կարև-

նա խաղաղ միջոցներով պաշտպանել յուր իրավունք, և թէ ժամանակ է Վարդան Մամիկոնյանի դարն վերակենդանացնել, թող Հայաստան ղոհ տա մի քանի հազար հայ քաջեր, բավ է, որ յուր մյուս որդիներ ազատ և երջանիկ սկսին ապրիլ»[1]։

Կոնֆերանսից Արծրունին առանձնապես սպասելիքներ չուներ նաև պատրիարք Ն. Վարժապետյանի բռնած դիրքի պատճառով, որը, ըստ երևույթին, ոչ առանց Բ. Դոան հանձնարարականի, կոնֆերանսում արած իր հայտարարության մեջ հայկական հարստահարությունների հարցը ներկայացրել էր որպես Թուրքիայի ներքին գործ[2]։

Ռուս-Թուրքական պատերազմի սկիզբը ցույց էր տալիս, որ Արևելյան հարցը թևակոխել է տերությունների ռազմական ընդհարման փուլը, անորոշ քաղաքական մթնոլորտը փոխարինվում էր վճռական անցքերով հղի մի իրադրությամբ, որի խորքերում «Մշակը» նշմարում էր Թուրքիայի ճնշված ազգությունների համար ճակատագրական պահը։ Արծրունու կարծիքով արդեն իրողություն էր դառնում այդ ազգությունների ազատագրման կարևոր մի հանգամանքը՝ արտաքին քաղաքական ու ռազմական միջամտությունը։ Արևմտահայերին մնում էր իրագործել դրա երկրորդ պայմանը՝ ղինված ապստամբություն, որը պետք է նպաստեր Ռուսաստանի հաղթանակին։ Արծրունին այդ օրերին գրում է, թե Ռուսաստանը հանդես էր գալիս ճնշված ազգերի ազատության պաշտպանի առաքելությամբ։ «Այն անվերջանալի Արևելյան խնդիրը... սպասում ոչ թե անորոշ դիպլոմատիական բանակցություններով, այլ սրով և արյունով»[3],—գրում էր նա։ 1877 թ. ապրիլից սկսած «Մշակը» իր գրեթե բոլոր առաջնորդողները նվիրում է ռուս-թուրքական պատերազմին, անդրադառնում է ռազմաճակատների իրադրությանը, դիվանագիտական անցուդարձին։ Դրանցում ամենուրեք ի հայտ է գալիս պարբերականի ռուսական կողմնորոշումը, Թուրքիայի հպատակ ազգությունների ազատագրման գործում Ռուսաստանի նշանակության ընդգծումը։

«Կ. Պոլսի և Ասիայի հայերը» առաջնորդողում հայ բուրժուական վերնախավը ու պաշտոնեության դասի շահագիտական, ինչպես նաև զուտ դասային նախասիրություններով արտահայտվող վարքագիծը Արծրունին բացատրում է Թուրքական տիրողների կողմից կաշառված լինելու հանգամանքով։ Այդ վերնախավը, բացահայտում է նա, և բացառապես ինքը, վայելում է ազգային սահմանադրության շնորհները, անիրաւորեն հարստահարում է գավառացուն՝ իր քաղաքական հնազանդությամբ փոխհատուցելով Թուրքական պետությանը։ Մինչդեռ իրավազուրկ և բռնադատվող գավառացին իր տնտեսական և հասարակական շահերը կապակցում է միայն քաղաքական ազատագրության հետ, ուստի անհամբերությամբ է սպասում «ոուսաց զորքի՝ իր հայրենիքը սանելը»[4]։

Արևմտյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու հեռանկարը փայփայող «Մշակի» դործիչներին տագնապով էր համակում արևմտահայերի գաղթը, որ սպառնալի չափերի էր հասել։ Գաղթը սկսվել էր դեռևս պատե-

---

1 «Մշակ», 1877, № 3։
2 Նույն տեղում, № 5։
3 Նույն տեղում, № 26։
4 Նույն տեղում, № 27։

բազմից առաջ, սահմանամերձ գյուղերը մտած թուրքական զորքերի գործադրած բռնությունների հետևանքով։ Ալեքսանդրապոլից գրած իր «Հայերի ճակատագիրը» թղթակցության մեջ Րաֆֆին եզրակացնում էր, թե ստեղծված բացառիկ դժվարին պայմաններում, երբ մոլեգնում են թուրքական զորքերն ու քրդական հրոսախմբերը, հայերը կամ պետք է գաղթեն և կամ դիմեն կրոնափոխության[5]։ Նույնանման «Մշակի» թղթակիցները լուրջ ուշադրություն են դարձրել գաղթի ազգային և սոցիալական հետևանքների վրա։ Այն կանխելու համար թերթի աշխատակից Հորոն առաջարկում էր արևմտահայերին շահագրգռել սեփական հողերի մշակությամբ, զարգացնել երկրագործական և գյուղատնտեսական արհեստները[6]։ Գաղթի պատճառները ազգային-քաղաքական բովանդակության մեջ էր փորձում խորանալ Յունիուսը՝ «Ազգայնության խնդիրը և հայ գաղթականության նշանակությունը» հոդվածում[7]։ Եվրոպայի անտարբերությունը արևմտահայերի տառապանքների հանդեպ նա բացատրում էր այն բանով, որ գաղթելով, հայերը կորցնում են իրենց ազգային հատկանիշները՝ լեզուն և կրոնը։ Գաղթականությունն է պատճառը, որ նրանք չեն կարողանում իրենց պաշտպանել։ Յունիուսը, ինչպես տեսնում ենք, ազատագրական պայքարի կոչ չի անում, ընդդիմության գաղափարը նրա համար սահմանափակվում է միայն ինքնապաշտպանության սկզբունքի առաջադրմամբ։ Այս հարցում «Մշակի» վերաբերմունքին առավել մոտ էր նրա Վանի թղթակից Մ. Փ.-ի (Մկրտիչ Փորթուգալյան) տեսակետը։ Իր մի թղթակցության մեջ նա հայտնում էր, որ միայն Վանից Կ. Պոլիս է գաղթել 20.000 մարդ։ Նա ցնցող պատկերներով է ներկայացրել Կ. Պոլսի Գասըմ փաշայի և Որղաթ բազարի խաներում ապաստանած պանդուխտ հայերի վիճակը[8]։ Հեղինակը գաղթի պատճառը համարում է այն, որ արևմտահայը զուրկ է կյանքի, պատվի, ստացվածքի ապահովությունից։ Նա նշում է նաև վաշխառուների անգթությունը և գյուղացու տգիտությունը՝ եզրակացնելով, որ այդ բոլոր պատճառները վերացնելու համար անհրաժեշտ է ընկերություններ հիմնել։ Վերջիններս պետք է կազմակերպեն հարստահարվողների զինված ինքնապաշտպանությունը, հող գնեն և տրամադրեն գյուղացուն, լուսավորություն տարածեն և այլն[9]։ Պայքարի և գործելու նույն վճռականությունն էր արտահայտում մեկ այլ թղթակից։ Պայքարը նա համարում է պարտքի գործ՝ «Լավ է մեռնել, քան թե ապրել այդպիսի լուծի տակ»[10]։

«Մշակի» թղթակիցները ուշադրություն են դարձնում նաև տնտեսական այն անտանելի պայմաններին, որոնց հետևանքով արևմտահայ գյուղացին ստիպված հեռանում էր հայրենիքից։ Արծրունին և Րաֆֆին իրենց հոդվածներում քանիցս անդրադարձել են այն իրողությանը, որ արևմտահայ գավառը փոշիանում է հարստահարությունների պատճառով։ Գավառում վաշխառուից առավել քայքայիչ դեր ուներ հարկման թուրքական համակարգը։ Լավատեղյակ հեղինակներից մեկը այս կապակցությամբ գրում էր. «Հողի

[5] Նույն տեղում, № 10։
[6] Նույն տեղում, № 27։
[7] Նույն տեղում, № 57։
[8] Նույն տեղում, № 61։
[9] Նույն տեղում, № 63։
[10] Նույն տեղում, № 72։

կամ արդյունքների հարկերը սահմանվում են ոչ պակաս, քան 4—5 տարվա համար։ Յուրաքանչյուր առանձին շրջանում սեփականատերերը պատասխանատու են ամբողջ քանակի համար և, հետևաբար, քանի որ նրանց քանակը նվազում է. հարկի մեծ մասն ընկնում է նրանցից յուրաքանչյուրի վրա, որ առավել նվազեցնում է երկրագործության օգտակարությունը»[11]։ Ավելորդ է ասել, որ գրանից բխող հետեանքները առավել ծանրությամբ ընկնում էին իրավազուրկ հայ հողագործի ուսերին։ Պակասը լրացնում էին թուրք և քուրդ հողատերերը։ «Եվ ահա,— գրում է մի այլ հեղինակ,— շնորհիվ ուժեղի գերագույն իրավունքի, բռնի կերպով դրավում են երկրագործ ժողովրդը սերնդից սերունդ տիրապետած և թափուներով հաստատված մեծաքանակ հողերը՝ շնորհիվ այդ իրավունքի... դյուղացիությունը արագ կերպով և խոշոր չափերով զրկվում է հողից, ապրուստի միջոցներից և դառնում հողազուրկ»[12]։ Նկատենք, որ ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական կառավարությունը էլ ավելի ծանրացրեց հարկային լուծն արևմտահայ գավառում։

«Մշակի» նյութերում լայնորեն լուսաբանվել է հայաբնակ թիկունքը ավերելու՝ թուրքական զորքերի և իշխանությունների գործելակերպը։ Ռուսաստանին միանալու արևմտահայերի բուռն ձգտումներին, ռուսական զորքերին ցույց տրվող օգնության և խորին համակրանքի դրսևորումներին թուրքական կառավարողներն ամենուրեք հակադրեցին ժողովրդի ֆիզիկական ոչնչացման և դաժան ճնշման քաղաքականությունը։ «Մշակը» բազմաթիվ տեղեկություններ ու փաստեր է բերել արևմտահայ մամուլից, որոնք նկարագրում էին թուրքական զորքերի և քրդերի գործած նախճիրները հայաբնակ գաստառներում։ Քրդերը, հայտնում է թերթը, Վասպուրականում ավերել են 19 հայկական գյուղ, հայ գավառացիները կոտորածներից ազատվելու համար փախել-ապաստանել են սարերում և կամ ոտքի երկրով մեկ[13]։ Խաղաղ բնակչության նկատմամբ կատարված բռնությունների առթիվ իշխանությունները հետաքննություն էին սկսում։ Ի վերջո, հանցավոր էին ճանաչվում հայ գյուղացիները, որոնց դաժանորեն պատժելով՝ ամբողջացնում և օրինականացնում էին խուժանի կիսատ թողած ոճիրները։ 1876-ի դեկտեմբերին Վանում մոլեգնած հրդեհի հետաքննությունն ավարտվեց համանման հանգամանքներում։ Հանձնաժողովը իրողությունը ձևակերպեց որպես մի ակտ, «...որով թուրք հասարակությանն և զորքերն կարդարացներ և մինչև իսկ կողոպուտի գործն ալ հայերի վրա նձսեռ»[14]։ «Մշակում» բացահայտվում են նանոնավոր զորքերի կիրառած բռնությունները Բայազետում, Ալաշկերտում, Արծկեում և այլուր։ Թերթի այս բովանդակության նյութերը ևս ապացուցում են, որ արևմտահայերի բնաջնջման ուղղությամբ կատարված թուրքական առաջին ձեռնարկները սկիզբ են առել 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին[15]։ Դրանք սոսկ ռազմական իրադրությամբ պայմանավորված ծայրահեղություններ չէին. այլ

---

11 S. Redcliffe, The Eastern Question, London, 1881, էջ 87։

12 Ա-դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներում. Երևան, 1912, էջ 273։

13 «Մշակ», 1877, № 46։

14 Նույն տեղում։

15 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 337։

պետական որոշակի քաղաքականության արտահայտություն, եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ մահմեդական զանգվածներին Բալկաններից Արևմտյան Հայաստան տեղափոխելով[16], թուրքական կառավարությունը ձգտում էր վերաբնակեցնել հայկական ամայացող հողերը։

Վկայակոչելով այս աղետները, Արծրունին իրավացիորեն եզրակացնում էր, որ տնտեսական-լուսավորական միջոցառումները և ընդհանրապես գավառի վիճակի բարվոքման հնարավորությունները թուրքական բռնապետության պայմաններում բացառվում են։ «Մենք կարող ենք, այնուամենայնիվ, այս համոզմունքի մնալ,— գրում էր նա,— որ թուրքաց տերության պես վայրենի, բարբարոս տերությունից իրավունքներ պահանջելու համար ուրիշ ճանապարհ չկա, եթե ոչ՝ զենքը ձեռքին արյուն թափելով»[17]։ Արևմտահայերի ազատագրական տրամադրությունները բորբոքելու նպատակով «Մշակը» վկայակոչում էր բալկանյան ապստամբած ժողովուրդների քաջարի պայքարը, ռուսական զենքի՝ միմյանց հաջորդող հաղթանակները և այլն։ «Ինքնապաշտպանության սրբազան իրավունքը» պրոպագանդը «Մշակի» էջերում գերաճում-հասնում էր ազատագրական պայքարի կոչի։ «Ազատություն տրվում է այն ազգերին,— գրում էր Արծրունին,— որոնք իրանց ազատությունը սրով պաշտպանել ցոտեն։ Առանց արյունի ազատություն չկա. որպես առանց զոհերի՝ փրկություն»[18]։

Նշված ժամանակաշրջանում «Մշակի» հակաթուրքական պրոպագանդի գլխավոր կողմերից մեկը պետք է համարել նրա հետևողականորեն կիրառած գիծը՝ արևմտահայերի նկատմամբ թուրքական կառավարության թշնամական ռեժիմը պարզաբանելու գործում։ Թերթը մեկնաբանում էր Բ. Դռան ապակողմնորոշող գործողությունները, Կ. Պոլսի բուրժուազիական վերնախավին սիրաշահելու իսկական նպատակները։ Պատրիարքին շքանշան պարգևելը, մի որևէ հայի բարձրաստիճան պաշտոնի նշանակելը, նկատում էր Արծրունին, սոսկ աչքակապություն է, դիվանագիտական խարկանք։ Մի ամբողջ ազգ խեղդելուց հետո, շարունակում է նա, սուլթանը չի կարող արժանանալ այդ ազգի համակրանքին։ Կառավարությունը սատում է, երբ պատճառաբանում է, թե չի կարող զսպել քրդերի և չերքեզների գաղանությունները, ընդհակառակն, նա ինքն է կազմակերպում այդ հորդաներին և կանխամտածված կերպով նրանց պղտոր հեղեղն ուղղում դեպի անպաշտպան գավառները[19]։ Թուրքական իշխանությունների մերկացման մեջ «Մշակի» մի նամակագիր տեսնում էր ժողովրդին ներքնապես ազատագրելու կարևոր ազդակ, որ վերջնականապես կաղատի նրան տերության սին իոստումների հետ կապված պատրանքներից։ Նա նկատում է, որ հայերը արդեն բացահայտորեն ընդդիմանում են Բ. Դռան հրամաններին. «Երբ այդ իշխանությունը անարժան կլինի կառավարության անունին, երբ դա բռնավորություն կլինի և երբ այդ բռնավորությունը իր վերջին ծայրը կհասնի, այն ժամանակ ապստամբությունը անդամ սրբազան պարտք կդառնա հարստահարված և ճնշված ժո-

16 А. Ф. Миллер, Краткая история Турции, М., 1948, էջ 106։

17 «Մշակ». 1877, № 63։

18 Նույն տեղում, 1878, № 22։

19 Նույն տեղում, 1877, № 63։

դովրդի համար»[20]։ Նամակագիրը հավանաբար նկատի ուներ արևմտահայերի զինվորագրության հարցի առթիվ Կ. Պոլսի ազգային ժողովի սահական դիրքը կառավարության հրահանգների նկատմամբ։ Կ. Պոլսի հայ աշխատավորության ձնշման ներքո այդ ժողովը մերժել էր զինվորագրության առաջարկը[21]։ Թերևս սա այն բացառիկ դեպքերից մեկն էր, երբ ազգային ժողովը սահմանադրությունն օգտագործեց Բ. Դոան կամքին հակառակ։ Խ. Նար-Պեյը և Մ. Իգմիրլյանը իրենց մերժումը պատճառաբանեցին նրանով, որ արևմտահայերի ազգային սահմանադրությունը երաշխավորում է խղճի և կրոնի ազատություն, մինչդեռ պատերազմը Թուրքերի կողմից հռչակված է իբրև կրոնական, սրբազան պատերազմ, ուստի և հայերը չեն կարող ընդդեմ գնալ իրենց խղճին ու համոզմունքին և մասնակցել դրան։ Հարցը, ի վերջո, հանձնվեց եկեղեցական համագումար ժողովին, որն իր հերթին մերժեց այն։ «Հայերը Ասիայում ռուսաց հաջողություններից քաջալերվելով,— գրում էր այդ առթիվ «Տոլոսի» թղթակիցը,— այժմ գլուխ են բարձրացնում և ոչինչ այնպես չեն ցանկանում, ինչպես բոլորովին ազատվել Թուրքաց տիրապետությունից»[22]։ Այդ խնդրի առթիվ «Մշակը» տպագրել է մի քանի հոդված, նաև՝ արտատպություններ Կ. Պոլսի «Տեմպս» և «Սթանդարդ» թերթերից։ «Մշակը» սուր քննադատության ենթարկեց առանձնապես «Սթանդարդի» դիրքը, որը ազգային ժողովի մերժումը համարում էր «ապստամբություն և ապերախտություն»՝ «բայեխնամ կառավարության» շնորհների դիմաց։ «Մշակը» մեջբերում է նաև «Մանզումեի էֆքյար» թերթի պատասխան հոդվածը, որտեղ ցույց է տրվում, որ «Սթանդարդը» Թուրքիայում պաշտպանում է անգլիական քաղաքականության շահերը[23]։

Հպատակ ժողովուրդներին մոլորեցնելու՝ Բ. Դոան ջանքերի մերկացմանն էր ուղղված նաև «Մշակի» վերաբերմունքը Թուրքական սահմանադրության նկատմամբ։ Առհասարակ թերթը մշտական ուշադրություն է դարձրել հպատակների իրավահավասարության վերաբերյալ Թուրքական պրոպագանդի նպատակները բացահայտելու գործին։ Որպես իրավական ակտ, սահմանադրությունը Արծրունին ածանցում էր տվյալ երկրի տնտեսության ու հոգևոր կուլտուրայի, հասարակական իրականության որոշակի մակարդակից։ «Սահմանադրական կառավարությունը,— գրում էր նա,— հարեմի, մահմեդականության, զորանի և անսահման իշխանության հետ երբեք հարմարվել չէ կարող»[24]։ Արծրունին նկատում էր, որ Թուրք սահմանադրականները ճնշված ժողովուրդներին կանում են իրենց շովինիզմով։ Կայսրության մեջ Թուրք ազգի տիրապետող դիրքի և մյուս ժողովուրդների հետ համեմատած՝ մտավոր

---

20 Նույն տեղում, 1878, № 13։

21 Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյաները խորշում էին բանակայ պետության բանակում ծառայելու մտքից և գերադասում էին տալ «բեգելիք ասկերիա» հարկը։ Այն գանձվում էր երեք ամսականից բարձր հասակի երեխաներից սկսած, անկախ հարկվողի ֆիզիկական վիճակից։ Ըստ էության, այդ հարկը ժողովուրդներին կողոպտելու միջոց էր, մանավանդ պատերազմական դրության ժամանակ։ 1877—1878 թթ. ռուս-Թուրքական պատերազմի նախօրեին քրիստոնյաներից միանվագ գանձվել էր երկու տարվա հարկ (Ш. В. Мегрелидзе, Закавказье в русско-турецкой войне 1877—1878 гг., Тбилиси, 1972, էջ 258)։

22 «Մշակ», 1878, № 3։

23 Նույն տեղում, № 7.

24 «Մշակ», 1877, № 5։

և իմացական կարծեցյալ առավելությունների ընդդծումով[25] «նոր օսմաններ» ապացուցում էին, որ կանգնել են ազգային հարցի գնահատման ամենահետադիմական դիրքերում։ «Թուրքիայի սահմանադրությունը» առաջնորդողում Արծրունին առավել հանդամանորեն էր քննարկում դրա բովանդակությունը՝ ելակետ ունենալով օսմանիզմի ագգայնական դոկտրինների արտահայտության առկայությունը։ Լեզվի և դավանանքների ազատության և իրավահավասարության անտեսումը հօդուտ տիրապետող ազգի, դրում էր նա, զավեշտական է դարձնում այդ սահմանադրությունը։ Հպատակ ազգերի իրավազրկության և կեղեքման պայմաններում դատարկ հնչյունի են վերածվում «միասնական հայրենիքի» և «օսմանցիության» մասին արվող հայտարարությունները։ «Մշակի» խմբագիրը անհիսն էր համարում «նոր օսմանների» նկրտումները, որոնք «...խոսում են երևակայական թուրքաց հայրենիքի վրա... և մահմեդականության... որպես պետական կրոնի վրա»[26]։ Նույն տեսակետն էր դարգացնում Արծրունին «Թուրքիայի ապագան» առաջնորդողում։ Կուրացած ազգայնամոլ ձգտումներով, նկատում էր նա, «նոր օսմանները» խոսում են ազգությունների մեջ քաղաքակրթություն ծավալելու օգտին, մինչդեռ այդ ազգությունները դտնվում են քաղաքակրթության ավելի բարձր աստիճանի վրա, քան տիրապետողները»[27]։

Թուրքական սահմանադրության ստեղծողներից՝ Միդհատի դործունեության պսակադերծումով ևս Արծրունին ցույց էր տալիս, որ այդ սահմանադրության հիմքում ընկած է հպատակ ժողովուրդներին հարստահարելու և ճնշելու ավանդական սկզբունքը։ «Քաղաքական անձնասպանություն» առաջնորդողում բացահայտվում են դանուբյան վիլայեթներում բուլդարացի ապստամբների նկատմամբ Միդհատի ձեռնարկած բարբարոսական միջոցները[28]։ «Մշակը» ծաղրեց Փարիզում ապաստանած Միդհատին, որի նամակը տպագրվել էր «Թայմսի» էջերում։ Այստեղ նախկին սադրաղամը մղնում էր Բուլդարիայում խաղաղ բնակչության հանդեպ թուրքական բանակի անզթությունները վերադրել ռուսական զորքերին և բուլդարացիներին[29]։ Նման մերկացումները հետապնդում էին մեկ նպատակ. ցույց տալ, որ թուրքական սահմանադրությունը ամենևին չի փորձում «նոր օսմանների» քաղաքակրթության սնդուրով պատած, բայց վաղեմության կնճիռներով լի բռնակալի դեմքը։

1877-ին Արծրունին արդեն կանխատեսում էր, որ Հայկական հարցը, որպես Արևելյան հարցի մի մաս, պետք է դառնա միջազգային քննարկման առարկա։ Թերթն այս սպասկցությամբ ձգտում էր եվրոպական ժողովուրդների ուշադրությունը բևեռել արևմտահայերի կացության վրա։ Մի հոդվածում Արծրունին հիշում է 1876-ին հրատարակած իր «Արևելյան հարց» (ռուսերեն) դրքույկը, որտեղ Արևելյան խնդիրը համարում է ոչ միայն սլավոնության և ուղղափառության, այլև ընդհանրապես քաղաքակրթության իրենը, ճնշված ժողովուրդների ազատագրական պայքար՝ ընդդեմ բռնակալու-

---

25 Ю. А. Петросян, Младотурецкое движение, М., 1971, էջ 129։

26 «Մշակ», 1877, № 17։

27 Նույն տեղում, 1878, № 18։

28 Նույն տեղում, 1877, № 45, 54։

29 Նույն տեղում, № 54։

թյան[30]։ «Այսօր վեր կացան եվրոպական Թուրքիայի հպատակները, հինգ-տասը տարուց հետո վեր կկենան ասիական Թուրքիայի հպատակները»[31],— գրում էր նա։ Եվրոպական հասարակական կարծիքի առջև արևմտահայերի վիճակը բացահայտելու համար «Մշակը» հայ մտավորականությանը առաջարկում էր հանդես գալ օտար պարբերականներում։ Սրանից չպետք է եզրակացնել, թե «Մշակը» պատերազմի տարիներին պատրանք է ունեցել արևմտահայերի հանդեպ Եվրոպայի բարյացակամության վերաբերյալ։ Ընդհակառակն, թերթը որոշակիորեն սահմանազատում էր եվրոպական հասարակական կարծիքը պաշտոնական քաղաքականությունից և ձգտում էր առաջինի ներգործությանը՝ երկրորդի վրա։ Կայսրության ճնշված ազգերի նկատմամբ Անգլիայի և Ֆրանսիայի վարած քաղաքականությունը «Մշակը» բացատրում էր նրանց նվաճողական նպատակներով[32]։ «Հայաստան և Եվրոպա» առաջնորդողում թերթը ճիշտ բացատրություն է տալիս Թուրքիայում եվրոպական տերությունների հակառուսական քաղաքականությանը։ Ո՛չ Անգլիան և ո՛չ Ֆրանսիան, պնդում էր նա, երբեք չեն մտահոգվել արևմտահայերի ծանր կացությամբ, նրանք գործել են իրենց շահերի տեսանկյունից և Թուրքիայի օգտին, ուստի իրավունք չունեն որոշելու ժողովրդի ճակատագիրը[33]։ «Թուրքիան» հոդվածում «Մշակը» նշում է, որ անգլիացիները զինում են թուրքական բանակը, ֆինանսական արյուն մղում նրա երակների մեջ, ինչպես և օգնում նրան՝ ձնշելու պայքարի ելած հպատակներին[34]։ «Մշակն» արտատպել է անգլիական «Թայմսի» մի հոդվածը, ուր ցուցադրվում է Վիեննայի, Բեռլինի, Լոնդոնի և Փարիզի մամուլի թուրքասիրական բովանդակությունը։ Այս առթիվ «Մշակը» գրում է. «Առանց այլևայլության կարող ենք ասել, որ ոչ մի օտար տերություն այդքան օգուտ քաղած չէ եվրոպական մամուլի ծառայությենից, որքան Թուրքիան»[35]։ Անգլիական «եսական» քաղաքականության ետևում Արծրունին տեսնում էր նրա տնտեսական շահերի առաջմղիչ ուժը։ Դա է, որ դրդում է նրան թույլ տալ Թուրքիային՝ ոչնչացնելու հայերին, որպեսզի ամայի ու անմարդաբնակ դառնան իր հսկայական տիրույթների փոքրասիական մատույցները։ Հայկական հարցի վճռական լուծումը Արծրունին տեսնում էր Թուրքիայի հայաբնակ նահանգները Ռուսաստանին միացնելու հեռանկարի մեջ։ Հակառակ դեպքում նա ենթադրում էր, որ այդ տարածքում կհաստատվի Անգլիան, որն անգթորեն կհարստահարի արևմտահայերին։ Եթե Ռուսաստանը չտիրանա այդ հողերին, եզրակացնում էր Արծրունին, ապա արևմտահայերը ամեն կերպ պետք է ջանան հեռու մնալ «նենգավոր, եսական Անգլիայի ճնշող և հարստահարող ձեռքից»[36]։

Արծրունին անդրադառնում էր արևմտահայերի մասին տպագրվող ոչ համակրական ելույթներին։ Այսպես, նա առարկում էր «Ռուսկի վեստնիկ» թերթի այն դիտողությանը, թե հայերը առևտրական ազգ են, և որ նրանց

30 Նույն տեղում, № 56։
31 Նույն տեղում։
32 Մ. Գ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 262—263։
33 «Մշակ», 1877, № 30։
34 Նույն տեղում, № 64։
35 Նույն տեղում։
36 Նույն տեղում, № 35։

այդ հատկությունը Արևմտյան Հայաստանում կվնասի ռուսաց շահերին։ Արևմտահայերը ոչ թե առևտրական են, այլ հիմնականում՝ երկրագործ, գրում է Արծրունին և օրինակ բերում Անդրկովկասի հայերին ու նրանց դերը տեղի տնտեսության զարգացման մեջ[37]։

Հայ ժողովրդին «Մշակը» սոց էր անում ամենուրեք օգնել ռուսական զորքերին, ամեն կերպ նպաստել նրանց առաջխաղացմանը։ Պատերազմի հաջող ելքից է կախված արևմտահայերի ճակատագիրը, պնդում էր Արծրունին. Հետևողական այս գիծը, որ վարում էր «Մշակը», ցույց է տալիս, որ թերթը լիովին համընթաց էր գնում Ռուսաստանի հանդեպ արևմտահայերի ունեցած իսկական զգացմունքներին, արտահայտում նրանց տրամադրությունները ու խոհերը։ Ռուսական զորքերին հայերը դիմավորում էին ցնծությամբ՝ հանձին նրանց տեսնելով իրենց ազատագրական բաղձանքներն իրականացնողներին։ Թերթը գրում էր, թե Կարսի հայերը խաչվառով են դիմավորել ռուսներին, իսկ մի այլ տեղ՝ վկայակոչում «Դեյլի նյուզ» թերթի թղթակցին, ըստ որի՝ արևմտահայերը «միաձայն և ջերմ կերպով ցանկանում են, որ ռուսաց իշխանություն հաստատվի Հայաստանում. ռուսաց զորքի յուրաքանչյուր հաղթություն լցնում է նրանց սիրտը ուրախությամբ, իսկ... անհաջողությունները այնպիսի տխրություն են պատճառում նրանց, որ կարծես մի նշանավոր դժբախտություն է պատահել»[38]։

«Հայաստանը ինչ պետք է դառնա» առաջնորդողում Արծրունին շարադրել է իր ակնկալիքները ռուս-թուրքական պատերազմից։ Այս, ինչպես և «Մշակի» տպագրած այլ նյութերից պետք է եզրակացնել, որ թերթը հավատում էր երկու հնարավոր ելքի՝ Արևմտյան Հայաստանը կա՛մ կմտնի Ռուսաստանի կազմի մեջ և կա՛մ ձեռք կբերի ինքնավարություն։ Թերթը նախապատվությունը տալիս էր առաջին հնարավորությունը, որն ըստ էության նշանակում էր Հայաստանի վերամիավորում։ Այս ձգտման հիմքում, փաստորեն, ընկած էին նաև արևելահայ բուրժուազիայի տնտեսական զարգացման անհրաժեշտ միտումները։ Ազգային պետության բացակայության պայմաններում արևելահայ բուրժուազիան իր հասարակական-տնտեսական նպատակները հանձնում էր ռուսական արտաքին քաղաքականությանը և ապավինում նրան։

Անդրադառնալով ֆեոդալիզմի դեմ ուղղված ազգային շարժումների ձևավոր արտահայտվող կապիտալիզմի վերջնական հաղթանակի պրոցեսին, Վ. Ի. Լենինը նկատում էր. «Այդ շարժումների տնտեսական հիմքը այն է, որ ապրանքային արտադրության կատարյալ հաղթանակի համար անհրաժեշտ է, որ բուրժուազիան նվաճի ներքին շուկան, անհրաժեշտ է պետական համախմբում այն տերիտորիաների, որոնց բնակչությունը խոսում է միևնույն լեզվով...»[39]։ Այս իմաստով «Մշակը» Ռուսաստանի օգնությամբ Արևմտյան Հայաստանը ազատագրելու և ազգային վերամիավորման հարցում փաստորեն արտահայտում էր այն ամբողջ առաջադիմականը, որ ի վիճակի էր առաջ քաշել արևելահայ բուրժուազիան։

---

37 Նույն տեղում, № 54։

38 Նույն տեղում, № 60։

39 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 493։

Մյուս հնարավոր ելքի՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարության ապահովումը Արծրունին դարձյալ կապում էր Ռուսաստանի հետ՝ նշելով, որ այս հարցում արևմտահայերի հույսը դարձյալ Ռուսաստանի վրա է։ Ռուսների Սան-Ստեֆանո մտնելուց հետո արևմտահայերը բուռն կերպով արտահայտում էին իրենց անվերապահ համակրանքը և հույսերը Ռուսաստանի հանդեպ։ Կ. Պոլսում ժողովուրդը մի շարք ցույցերով դրսևորել էր իր նվիրական զգացումները[40]։ «Մշակը» ծանուցում էր, որ Օրթագյուղի թատրոնում Գ. Ադամյանը՝ «առաջին կարգի դերասանը» «շարժումներով պիտի կարդա Նալբանդյանցի երգը, ինչպես ուրիշ անգամ ալ կարդացած է Պատկանյանի «Հիմի էլ լռենքը»[41]։ Հիրավի, մթնոլորտը հագեցած էր Ռուսաստանի միջոցով մոտալուտ ազատագրման սպասելիքներով։

1877-ի վերջերին, ելնելով միջազգային իրադրությունից, ռուսական արաբին քաղաքականության մեջ Բալկանների առաջնակարգ նշանակությունից և դրա դիվանագիտական դրսևորումներից, «Մշակն» ավելի բարվոք է համարում Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը։ Արծրունու այդ խոսքերն արտահայտվեցին դեռևս 1877-ի օգոստոսին գրած «Արևելյան իրադիրը» առաջնորդողում։ Եվրոպայի հասարակական կարծիքը ի նպաստ արևմտահայերի ուղղելու «Մշակը» ջանքերը, որ նշեցինք վերը, ըստ էության հետամտում էին Արևմտյան Հայաստանի ինքնավարության հետ կապվող հարցի բարեհաջող լուծումը։ Արծրունին ենթադրում էր, որ ինքնավարության խնդիրները պետք է դառնային միջազգային քննարկման առարկա։

Սան-Ստեֆանոյի դաշնագիրը, փաստորեն, տալիս էր առավել քիչ հնարավորություններ, քան կարծում էր Արծրունին։ Սակայն պատերազմի ամբողջ ժամանակաշրջանի անգուլ գործունեությունը, արևմտահայերի ազատագրման հույսերից սնվող հրապարակախոսական կիրքը և, ի վերջո, խիստ զոչափելի թվացող հույսերը Ռուսաստանի ազատագրական դերի նկատմամբ, այս ամենը պատճառ դարձան, որ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը Արծրունին դնահատեր շատ ավելի լայն բովանդակություն վերագրելով դրան, քան կար իրականում։ Դաշնագրի «տեղական պահանջների համեմատ բարենորոգումներ իրագործելու մասին» ձևակերպումը նա ըմբռնում էր ինքնավարության իմաստով. «Քրիստոնյա նահանգապետ, սեփական քաղաքային և գյուղական վարչություններ, կայրերի և անձնական ապահովություն, կալվածների ազատելը թուրք և քուրդ բեյերի ավատական իշխանությունից, սեփական կամ խառն դատարաններ, դատաստանի առջև քրիստոնյաների և մահմեդականների հավասարություն, ուսումնարանների ազատություն, ամբողջ երկրից Թուրքիային տրվող տարեկան որոշված հարկը... Մի խոսքով այն բոլորը, որ վերարերվում է նահանգական ինքնավարության հաստատվելուն»[42],—գրում էր Արծրունին։ Բացի այդ, սա արևմտահայերին առաջարկում էր պահանջել սեփական պահապան զորք ունենալու իրավունք՝ քրդերից և չերքեզներից պաշտպանվելու համար։ Եթե հաշվի առնենք այն, որ հայկական նահանգական ինքնավարության նշված սկզբունքները գրեթե համապատասխանում էին Արևմտյան Հայաստանի՝ պատրիարքի ներկայացրած վար-

40 Լ ե ո. Գրիգոր Արծրունի, հատ. 3, Թիֆլիս, 1905, էջ 42։
41 «Մշակ», 1878, № 43։
42 Նույն տեղում, № 37։

չական կառուցվածքին[43], սակայն պետք է եզրակացնել, որ դաշնագրի մեկնաբանման գործում «Մշակը» և Կ. Պոլսի հայ գործիչները համամիտ են եղել և որ տարաձայնությունները սրանց միջև սկսվել են Բեռլինի կոնգրեսին անմիջապես նախորդող ժամանակաշրջանում։

Ռուս-թուրքական պատերազմի վերջերին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող դեպքերը նոր տագնապներով էին համակում «Մշակին» և նրա շուրջ խմբված գործիչներին։ Էրզրումի, Բասենի, Ալաշկերտի և այլ վայրերի բնակիչների զանգվածային գաղթը՝ նաև ոչ միայն Ռուսաստան[44], նրանց զրկում էր կրկին չափակշռել ոչ վաղ անցյալի իրադարձությունները։ Այս պայմաններում թերթի խոհերը դարձյալ ուղղվում են դեպի ազատագրական պայքարի գաղափարը։ Պարբերականի առաջնորդողներից ու արտաքին տեսության նյութերից պարզ է դառնում տերությունների ընդդիմադիր դիրքը հայկական ինքնավարության նկատմամբ։ Ակնհայտ է, որ «Մշակի» խմբագիրը կասկածանքով էր համակված անարյուն ինքնավարություն ստանալու հեռանկարի։ «Եթե Թուրքիայի հայերը ապստամբեին բոսնիացիների, հերցեգովինցիների և բուլղարների պես, պատերազմի վերջանալուց հետո Թուրքաց տերությունը կտար նրանց իրավունքներ, կշնորհեր նրանց այն արտոնությունքը... ուրեմն հայերը ոչինչ չշահվեցան, որ չապստամբվեցան»[45],— գրում էր նա։

Ստեղծված պայմաններում «Մշակն» առաջարկում է հաստատակամ դիրք գրավել դիվանագիտական անծանոթ և դժվարին ուղիներում, Բեռլինի կոնգրեսում հարուցել Հայկական հարցը։ Թերթն այս տեսակետից կատարում է որոշակի քայլեր՝ արտասահմանի մամուլից արտատպում է Պետերբուրգ և Բեռլին մեկնած հայ պատվիրակների կենսագրականները, քննարկում և քննադատում է Արևմտյան Հայաստանի բարենորոգումների՝ կոնգրեսին ներկայացված նախագիծը։ Այդուհանդերձ, ռուս-թուրքական պատերազմի ավարտին «Մշակը» վերադառնում էր նույն սկզբունքին, ինչ առաջադրում էր դրա սկզբում՝ ազատագրական պայքարի վճռական նշանակության ընդգծումը։ Այս իմաստով և՛ Հայկական հարցի՝ միջազգային իրավունքի ճանաչված բավիղները մուտք գործելու, և՛ արևմտահայերի մշակութային-լուսավորական գործունեության վերաբերյալ պատկերացումներն ունեին ընթացիկ, թերթի դիրքորոշումը միայն մասնակիորեն բնութագրող նշանակություն։ Առաջնակարգը մնում էր ազատագրական կռվի գաղափարը։ «Մի ազգ,— գրում էր Արծրունին,— որ բնակվում է հափշտակիչ ավազակների շրջանում, եթե չէ կամենում կորչել, անհետանալ, ջնջվել աշխարհի երեսից, պետք է նույն միջոցներով, նույն զենքով պաշտպանե իրան, ինչ միջոց և զենք գործ են ածում նրան շրջապատող վայրենի ավազակները այն ազգը ջնջելու համար»[46]։

---

43 Մ. Դ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 52։

44 R. Mirak, Outside the Homeland, „Recent Studies in Modern Armenian History", Massachusetts, 1972, էջ 119.

45 «Մշակ», 1878, № 51։

46 Նույն տեղում, № 82։

ГАЗЕТА «МШАК» В ГОДЫ РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЫ 1877—1878 гг.

Кандидат филол. наук А. А. ХАРАТЯН

(Резюме)

Во время русско-турецкой войны 1877—1878 гг. газета «Мшак» пропагандировала идеи освободительной борьбы западных армян против турецкого ига. В материалах газеты отразилась русская ориентация западных армян, их надежды на освобождение с помощью России. Редактор и сотрудники газеты сумели обосновать экономические и политические мотивы этой ориентации и ее исторические основы. Газета подвергла основательной критике турецкую конституцию 1876 г., выявила шовинистические цели и политику «новых османов» по отношению к другим народам Турции и показала причины оторванности турецких реформаторов от угнетенных народов Османской империи.